

«Գրանցված է»

ՀՀ արդարադատության
նախարարության կողմից

30 նոյեմբերի 2009 թ.

Պետական գրանցման թիվ 10209422

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

26 նոյեմբերի 2009 թ. N 291-Ն
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ**

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

26 նոյեմբերի 2009 թ. N 3647-Ն

Հ Ա Մ Ա Տ Ե Ղ Հ Ր Ա Մ Ա Ն

**ՀԱՐԿԱՑԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ
ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ՀԱՐՈՒՑՎԱԾ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՈՒՑԹՆԵՐՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՀԱՐԿԱԴԻՐ ԷԼԵԿՏՐՈՆԱՑԻՆ
ԱՃՈՒՐԴՆԵՐՈՎ ԻՐԱՑՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի
հոկտեմբերի 8-ի թիվ 955 որոշման դրույթները.

Հրամայում ենք՝

1. Հարկային մարմնի կողմից ներկայացված կատարողական թերթերի հիման վրա դատական
ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում հարուցված կատարողական
վարույթներով անցկացվող հարկադիր էլեկտրոնային աճուրդներով իրացվող գույքի վերաբերյալ
էլեկտրոնային եղանակով տեղեկատվություն տրամադրել հարկային մարմնին յուրաքանչյուր
տասնօրյակի վերջին օրվա դրությամբ թարմացված տվյալներով՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող
տասներորդ օրը:

ՀՀ արդարադատության նախարար

Գ. Դանիելյան

**ՀՀ կառավարությանն առընթեր
պետական եկամուտների կոմիտեի
նախագահ**

Գ. Խաչատրյան

Հավելված N 1

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

